ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Ի ՀԵՌԱԳՐԵՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ.

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ՇՆՈՐՀԱԶԱՐԴ ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Անթիլիաս, Բեյրութ

Ամանորի և Փրկչի Ծննդյան տոների առթիվ ընդունեցեք Մեր շնորհավորանքը, և Մեր օրհնությունը հաղորդեցեք հոգևորականության, եկեղեցական-կրթական հաստատությանց և Մեր սիրեցյալ հոտին:

ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻԻՆ

Մոսկվա

Անձամբ Մեր և էջմիածնի միաբանության անունից, Մեր սրտագին շնորհավորանքներն ենք հղում ամանորի և Ծննդյան տոների առթիվ: Աղոթում ենք Ամենաբարձրյալին՝ պարգևելու երկար տարիների բարօր կյանք Ձերդ Վեհափառության՝ Ռուսաց Պրավոսլավ Եկեղեցու արժանավոր Պետին և բոլոր քրիստոնյա քույր եկեղեցիների միջև փոխըմբռնման գաղափարի ազնիվ պաշտպանին:

ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԱԼԻՍՏՐԱՏԻՆ

Թբիլիսի

Անձամբ Մեր և Էջմիածնի միաբանության անունից, Մեր սրտագին շնորհավորանքները ենք հղում ամանորի և Մենդյան տոների առթիվ: Ցանկանում ենք Ձերդ Վեհափառության երկար տարիների բարօր կյանք՝ ի փառս Վրաց Պրավոսլավ եկեղեցու:

ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐ Կ. ՊՈԼՍԻ ԵՎ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀՆԵՐԻՆ ԵՎ ԲՈԼՈՐ ՔԵՄԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ

Ամանորի և Փրկչի ծննդյան տոների առթիվ ընդունեցեք Մեր շնորհավորանքները ու օրհնությունը, և հաղորդեցեք այն հոգևորականության, եկեղեցական-կրթական հաստատությանց և Մեր սիրեցյալ հոտին:

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Ի ԱՆՈՒՆՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ

Բեյրութից

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ՎԵՀԱՓԱՌ ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՑ

ԷՋՄԻԱԾԻՆ, ԳԵՈՐԳ Զ. ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Մենդյան Ս. Տոների առթիվ շնորհավորհանքներ և լավագույն ցանկություններ:

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Մոսկվայից

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻՑ

ԷՋՄԻԱԾԻՆ, ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ ԳԵՈՐԳ Զ. ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Շնորհակալություն եմ հայտնում Ձերդ Վեհափառության ողջույնի համար, և փոխադարձաբար շնորհավորանքներս հղում Ձեզ՝ ամանորի և Փրկչի Մենդյան տոների առթիվ, ցանկանալով հայոց Քույր եկեղեցուն հարատևություն և բարգավաճում:

Քրիստոնեական սիրո ողջունիվ՝

ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻ

Պոլսից

ՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ՝ ԳԵՐԱՊԱՏԻՎ Տ. ԳԵՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐՍԼԱՆՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ, ՎԵՀԱՓԱՌ ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Մեր և հավատացյալ ժողովրդի կողմից կշնորհավորենք նոր տարին և Սուրբ Ծնունդը:

Առողջության սրտագին մաղթանքներով՝

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ՝ ԳԵՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՎՐԱՑ ԿԱԼԻՍՏՐԱՏ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ.Տ. ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՆՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՓԱՌ ԳԵՈՐԳ Զ.
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՁԵՐԴ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ, ՍՐԲԱԶՆԱԳՈՒՇՆ ՅԵՐ, ՈՂՈՐՄԱԾ ՀՈՎՎԱՊԵՏՆԵՐ ԵՎ ՀԱՅՐ ՀԱՅԱՆՆԵՐ

Ողջունում ենք Ձեզ և Ձեր հովանու տակ գտնվող հովվապետներին, հովիվներին և հոտին՝ Աստծո ողորմությամբ առաջիկա Ամանորի և նրա հաջորդող Քրիստոսի Ծննդյան և Հայտնության առթիվ, որի ընթացքում մեր ուղղափառ Սուրբ եկեղեցին երգում է Բեթղեհեմում հաճանչող Ճշմարտության Արեգակին և աշխարհը լուսավորող Քրիստոս Աստծուն. «Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Դժբախտաբար, անցյալ 1949 թվականին, աշխարհին տրված հրեշտակային այս ավետումից հետո, երկրի վրա ոչ ամենուրեք գոյություն ունի խաղաղություն, և ոչ բոլոր մարդկային սրտերում զգացվում է հանություն. ընդհակառակը, խորհրդակցություններ են զումարվում նոր պատերազմի նախապատրաստման համար՝ անխիղճ, անգութ, եղբայրասպան պատերազմի համար:

Ի՞նչ անենք մենք՝ հովիվներս և հովվապետներս այս սրբազան օրերում. առանց ցասումի և կասկածանքի բարձրացնենք՞ մեր մաքուր ձեռքերն առ Նա, առանց Որի կամաց մազ անգամ չի ընկնում մեր գլխից և խանդաղատանքով խնդրենք Նրանից. խափանի՛ր, Տե՛ր, բաժանի՛ր լեզուները այն մարդկանց, որոնք պատրաստվում են խեղդել մարդկությունը արյան ծովի մեջ, ըստ Քո անսուտ խոստման՝ «Իմ են վրէժխնդրութիւնք և ես հատուցից»:

Ձեր Վեհափառության սիրելյալ եղբայր ի Քրիստոս՝

ԿԱԼԻՍՏՐԱՏ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՑՆ ՎՐԱՑ

Երուսաղեմից

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ՝ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԵՂԻՇԵ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ, ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՈՐԳ Զ.Ի՝

Զերդ Վեհափառություն, ջերմագին շնորհավորություններ ենք հղում Ս. Ծննդյան տոների և նոր տարվա առթիվ, ցանկանալով Զերդ Վեհափառության երկար և երջանիկ կյանք, բարգավաճում՝ Հայրենիքին և հարատևություն՝ Մայր Աթոռին:

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ՝ ԵՂԻՇԵ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ

ԱՄԱՆՈՐԻ ԵՎ Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ, ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՌԱԳՐԵՐ ԵՆ ՍՏԱՑՎԱԾ ՆԱԵՎ՝

Հունաստանի Հայոց թեմի առաջնորդ՝ Գեր. Տ. Կարապետ Արքեպիսկոպոս Մազլումյանից,

Եգիպտոսի Հայոց թեմի առաջնորդ՝ Գեր. Տ. Մամբրե Արքեպիսկոպոս Սիրունյանից,

Եվրոպայի Հայոց թեմի Հայրապետական Պատվիրակ՝ Գեր. Տ. Արտավազդ Արքեպիսկոպոս Սյուրմեյանից,

Վրաստանի Հայոց թեմի առաջնորդ՝ Գեր. Տ. Կարապետ Արքեպիսկոպոս Թումանյանից,

Հյուս. Ամերիկայի Արեվելյան թեմի առաջնորդ՝ Գեր. Տ. Տիրան Եպիսկոպոս Ներսոյանից,

Արարատյան թեմի Երևանի Եկեղեցիների Քահանայական Դասի և Եկեղեցական խորհուրդների կողմից,

Կալիֆորնիայի Հայոց թեմի առաջնորդ՝ Գեր. Տ. Վարդան Արքեպիսկոպոս Գասպարյանից,

Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ՝ Գեր. Վազգեն Ծ. Վարդապետ Բալչյանից,

Ադրբեջանի և Թուրքեստանի Հայոց թեմի առաջնորդ՝ Գեր. Տ. Սուրեն Եպիսկոպոս Թորոսյանից,

Հարավ. Ամերիկայի Հայրապետ. ներկայացուցիչ՝ Գեր. Տ. Կարեգին Արքեպիսկոպոս Խաչատրյանից,

Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի Հայոց թեմի առաջնորդ՝
Դեր. Կարապետ Մ. Վարդապետ Ասլամազյանից,
Իրանի Հայոց թեմերի Քահանայական Դասի և
Եկեղեցական խորհուրդների կողմից,
Շիրակի Հայոց թեմի առաջնորդ՝ Դեր. Գարեգին Մ. Վարդապետ
Հակոբյանից,
Իրաքի Հայոց թեմի առաջնորդական տեղապահ՝ արժանապատիվ
Դր. քահ. Տ.- Հակոբյանից,

ինչպես և զանազան հասարակական կազմակերպությունների և անհատ հավատացյալների կողմից, որի առթիվ Վեհափառ Հայրապետը հայտնում է իր գոհունակությունն ու օրհնությունը և փոխադարձ շնորհավորանքներ է հղում վերոհիշյալներին:

ԱՆԴԱՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ՝ **ՁԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ**